Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 10-ի N 1553 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՉՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԵՐՔՈ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԵՆՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅՈՒՄ ԱՌԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

---

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչով սահմանված՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ներքո գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների պետական գրանցման վերաբերյալ իր տվյալների բազայում առկա տեղեկությունները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N 1553 - Ն որոշման N 2 հավելվածի ձևի, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեգիստրի տեղեկատվական համակարգի հետ իր կողմից շահագործվող e-register.am էլեկտրոնային համակարգի համակցման միջոցով տրամադրում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը, ընդ որում, առաջին անգամ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տեղեկություններ տրամադրելիս, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրվում են իր տվյալների բազայում առկա՝ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության

դասակարգչով սահմանված՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ներքո գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկությունները, իսկ ոլորտի նոր ստեղծված, ինչպես նաև լուծարված տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկությունները e-register.am էլեկտրոնային համակարգի կողմից իրական ժամանակում ավտոմատ փոխանցվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեգիստրի տեղեկատվական համակարգին, e-register.am էլեկտրոնային համակարգում նշված տեղեկությունների գրանցմանը զուգահեռ:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը մինչև յուրաքանչյուր եռամսյակն հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը՝ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչով սահմանված՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի գործունեության տեսակների ներքո գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ իր տվյալների բազայում առկա տեղեկությունները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N 1553 - Ն որոշման N 3 հավելվածի ձևի, տրամադրում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը, ընդ որում, առաջին անգամ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տեղեկություններ տրամադրելիս, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրամադրվում են իր տվյալների բազայում առկա՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկությունները, իսկ յուրաքանչյուր հաջորդ անգամ միայն ոլորտի նոր տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև գործունեությունը դադարեցրած տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկությունները:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, սույն կարգի 2-րդ կետում նշված տեղեկություններն առաջին անգամ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տրամադրելիս, հիմք է ընդունում նաև Հայաստանի

Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից նախապես տրամադրված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարող սուբյեկտների ցանկերը:

4. Սույն կարգի 1-ին և 2-րդ կետերում նշված տեղեկությունները ներառվում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից վարվող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի վարչական ռեգիստրում և պարբերաբար թարմացվում են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 10-ի N 1553 - Ն որոշման

Ձև

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻՑ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՉՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԵՐՔՈ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ	Իրավաբա-նական անձի անվանումը	Պետ. ռեգիստրի գրանցման համարը	Իրավաբա-նական անձի գրանցման օրը	Իրավաբանական անձի ՀՎՀՀ-ն	Իրավաբանական անձի գտնվելու վայրը	Գործունեության հիմնական տեսակը (նշել կոդը՝ ըստ Տնտեսական գործունեության տեսակների ՀՀ դասակարգչի 26.11.0, 26.12.0, 26.20.0, 26.30.0, 26.80.0, 46.51.0, 46.52.1, 46.52.2, 46.52.3, 58.21.0, 58.29.0, 61.10.3, 61.20.4, 61.30.2, 61.90.0, 62.01.0, 62.02.0, 62.03.0, 62.09.0, 63.11.0, 63.12.0, 95.11.0, 95.12.0, 47.41.0, 47.42.0 և 85.59.3 ենթադասերի)	Բաժնեմասերի սեփականատերերը (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ)

Տեղեկությունները ներկայացված են իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրառված տեղեկությունների համաձայն:
Տեղեկությունները գրառվել են պետական գրանցման պահին իրավաբանական անձի ներկայացրած տեղեկատվության հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15_1553

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 10-ի N 1553 - Ն որոշման

Ձև

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻՑ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՉՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԵՐՔՈ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ	Իրավաբանական անձի անվանումը	Իրավաբանա-կան անձի ՀՎՀՀ-ն	Իրավաբանական անձի գտնվելու վայրը	Գործունեության հիմնական տեսակը (նշել կոդը՝ ըստ Տնտեսական գործունեության տեսակների ՀՀ դասակարգչի 26.11.0, 26.12.0, 26.20.0, 26.30.0, 26.80.0, 46.51.0, 46.52.1, 46.52.2, 46.52.3, 58.21.0, 58.29.0, 61.10.3, 61.20.4, 61.30.2, 61.90.0, 62.01.0, 62.02.0, 62.03.0, 62.09.0, 63.11.0, 63.12.0, 95.11.0, 95.12.0, 47.41.0, 47.42.0 և 85.59.3 ենթադասերի)	Գործունեության այլ տեսակները (նշել կոդը՝ ըստ Տնտեսական գործունեության տեսակների ՀՀ դասակարգչի ենթադասերի)	Աշխատողների թիվը (աշխատավարձի հաշվարկման համար կիրառվող աշխատողների միջին թիվը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15_1553